

ԲԱՆՍՈՒՐԱԿԱՆ

Ողջն առ Սիւն : — Յուշիկք Հայրենեաց Հայրոց ,
Ժպիտք և արտասուք — Վահագն : — Դիւան : — Սօս
և Սօնգիպի : — Վանայ բեւեռագիր Տախտակները
և Տ. Մօրթման :

Մեր վերջին բանասիրական փոր-
ձերը հիւրընկալ պատուասիրութեամբ
հրատարակող Սիւն ազգօգուտ ամսա-
գրին մեծայորք խմբագրութեան մեր
շնորհակալեաց հաւաստիքը ընծայե-
լու կրկնակի պատուասիրութիւն ու-
նիմք :

Նախ իւր պատուական էջերը մեր
խակ գրչափորձութեանց զոհած ըւ-
լարուն համար , և ապա՝ գեղեցիկ ծա-
նօթութեամբ մը՝ զմեզ , բուն բանա-
քննութեան արգասաւոր՝ բայց դը-
ժուարաւայր դաշտը հրաւիրելու չափ
մեր վրայ վստահութիւն ցըցուցած
ըլլալուն :

Բայց այս ձեռնարկութիւնը մեր
կարողութենէն վեր ըլլալովն հան-
դերձ , մեր նպատակէն ալ դուրս է :

Ղգային նորաբողոք մատենա-
գրութեան ժամանակ առ ժամանակ
ի լոյս ընծայած երախայրիքը յիշա-
տակել , և բանասէրներու քմաց ա-
խորժելի պողովները քաղելով հասա-
րակութեան ճաշակմանը յանձնել ,
ահա՛ ասոնք են մեր փորձերուն վախ-
ճանն ու նպատակը :

Նորոք մատենագրութիւննիս՝ բա-
նաստեղծական նախերգանքը դադ-
րեցընէ , երբ թարգմանութիւնները ,
հետեւողութիւնները և վերջապէս
հեղինակութեանց դուզնաքեսոյ փոր-
ձերն ու դողդոջաքայլ խարխալումնք-
ները , լիաձիր մտաց ծնունդներու
տեղի տան և ազգին գրական սեղա-
նը՝ բազմախորտիկ զարգարուի , այն
ատեն յարմար միջոց , աւատ նիւթ

և օգտակար պտշտօն կ'ունենայ Քրե-
նագատութիւնը :

Կրիտիկոսը յայնժամ կ'իջնէ յաս-
պարէզ՝ անարժան համբաւ մը ամփո-
փելու , թիւր վարդապետութիւն մը
հերքելու , անուպայ կամ անհարազատ
դեր մը , տմոյն կամ եկամուտ քեր մը
ձաղաճանակ խոյտառակելու , միով
բանիւ , հանձարը՝ տաղանդէն , տա-
ղանդը՝ պարզ խելքէն և խելացին
անխելքէն ոլորշելու :

Նա այժմ ազգ . գրականութիւնը
առաւել խրախուսանաց ու քաջալե-
րութեան կարօտ է , քան քննութեան
և անաչառ դատողութեան :

Իսկ մեր — ինչպէս արդէն ըսինք —
ոչ քննադատ և ոչ քաջալեր հանդի-
սանալու փառասիրութիւնը ունիմք
մեր բանասիրական տիրա փորձերովը ,
նա մանաւանդ այնպիսի երկասիրու-
թեանց՝ յորոց ոմանք բանադատական
սահմանէն դուրս են , և ոմանք՝ մեր
ջնջին խրախուսանաց չեն կարօտիր :

Բաւ է մեզ , եթէ մեր անձեռն
հաս դիտողութիւնները — թէ՛ ի գո-
վեստ և թէ՛ ի սրբօրու այլ և այլ գը-
րաւորական վստակոց — մասամբ ի-
ւիք նպաստէին ընթերցասիրութեան
գեղեցիկ ձիրքը՝ ազգայնոց մէջ տա-
րածելու , անտարբերութիւնը՝ ջնն-
ջելու , և հայրենեաց ու ազգի սէրը
ժողովրդեան սիրտն արծարծելու :

Նա՛յս այս վերջին արգասիքը յա-
ռաջ բերող երկասիրութիւն մը՝ Սը-
խիթարեան Հարց մամլէն ի լոյս ըն-
ծայուած է , զոր գովաբան գրիչը չի
կրնար իրեննիւթ չլիտրիւ և ընթեր-
ցասիրաց անմոռանալի Յուշիկ մը չա-
ւանդել :

Դարուս ազգ . մեծանուն պատ-
մագէտ — բանաստեղծին բազմամեաց

լուութիւնը՝ այս անգամ դարձեալ կ'ընդհատի երկհատոր Յօդի ու մը ուր ամեն աստիճանի մարդիկ՝ իրենց ճաշակին յարմար ծարակ կը գտնեն:

Իննաստեղծը՝ իր քնարին համար, տուժարագէտը՝ օրացոյցին, հնախոյզը՝ պատմութեան, փիլիսոփան՝ մարդկութեան, և կրօնասէր անձը՝ սիրոյ և ճշմարտութեան . . . :

Հ. Ղեւոնդ Ղլիշան՝ Հայաստանի պատմութեան մէկ ընտիր ծաղկաքաղը կուտայ այս գրքոյնէն ուր, որ ծոխ հմուտութեամբ և շատ մը ձեռագիրներու խուղարկութեամբ նուրանոր լոյսեր կը սփռին մեր ազգ. աւանդութեանց վրայ:

Բաղըրերգակ Հայ Նահապետն՝ գհետ կը լինի Հայաստանի դաւառներէն՝ ժողովրդեան սրտէն թռած շատ մը անձանթ թկեղեցական և աշխարհական հոգեխօս գանձեր և անոյշ երգեր ու անարուեստ բայց բընախորժ բանաստեղծութիւններ ժողվելու և Յօդի մէջ դնելու, որոնք ուրիշ տեսակ գրուածքի մէջ չէին կր'ար ձահողագոյն եղանակաւ 'ի մէջ բերուիլ և յիշուիլ:

Իսկ Հայաստանի աշխարհագրական կամ տեղագրական մասին վրոյսօք տրուած ծանօթութիւնները՝ միծարդիւն հեղինակին այս մասնաւոր ճիւղիս մէջ ստացած համբաւը, եւս առաւել հաստատած են, և ազգայնոյս համար ալ օգտաւէտ տեղեկութեանց աղբիւր մը կը ներկայացնեն:

Ղլիշանեանի Յօդի բացարձակ կըցուցնէ որ, Նահապետը՝ ոչ միայն վերջին ժամանակիս ազգ. Սոսայից հակամրցանաց մէջ դափնեկիր ակոյեանն է, այլ և աշխարհագրութեան մէջ, սրտամագիտութեան մէջ ալ:

Ս. Երջապէս, ամեն Հայու ձեռք գտնուելու արժանի է այս կրկնահա-

տոր բազմագուտ երկասիրութիւնը, որոյ անշուք և անպաճոյճ անուանը տակն ամփոփած է բազմահմուտ հեղինակը՝ ինչ որ Կնճիճեանի գործոյն մէջ կարելի չէ գտնել. — Հայաստան երկրին սահմանաց և բնագիտական հանգամանաց նկատմամբ տեղագրական ու ստորագրական մանրամասն և ճշգրիտ տեսութիւններ և ազգ. սրտամութեան միջնաղ դիտաց ու թերածանօթ անձանց ոմանց մասին դահուցոյցի տեղեկութիւններ — :

Սիով բանիւ, Կնճիճեանի Հնախօսութեան թերին լեցնելով հանդերձ — իբրեւ պիտանի գործ — անկէց ալ առաւելած է աշխարհիկ, խօսուէն, ընտիր և հանրիմաց ոճովն, վիպական կենդանի և բնական գոյնովը, գեղեցիկ և ճարտար հիւսերովը, սրտի և ճաշակի փափկութեամբը, բառերու վայելուչ կիրառութեամբը, և բանաստեղծական չքնաղ նկարագրութիւններովը, զոր թէպէտ սոսկ սրտամութեան համար անսովոր է 'ի գործածել, սակայն այս մասնաւոր գրքուկիս յօրինման ձեւն ու տիպարը եւ Հայկակի մը գիմառնօրէն գրուելուն դաղափարը՝ խիստ յարմար բերած և վայելցուցած են, ինչպէս ինքն իսկ աղուաբան հեղինակը՝ իւր սրտաբուղիս Նախաբանին մէջ կը յիշէ ըսելով:

« Երբ այսպիսի յիշատակաց վրոյ շարժի գրիչն, չի կրնար գոնէ կայծեր չցատքեցընել, Պատմիչն յանկարծ վիպասան կ'ըլլայ, բանագատն՝ բանաւստեղծ »:

Իր կարգին մէջ իրաւամբ անգուգական գտնուող այսպիսի աշխատասիրութիւն մը՝ աւելի շօշափելու համար կ'արժէ որ բնութեամբ քիչ մ'ալ յառաջ երթանք:

Սիւլէն Գարոյ և Սարգիս-Բեան:

Սրբազան Ժարդոյս, փոքրիկ բանաւ տեղական նկար մ'է, որ որչափ կարճ և հակիրճ, այնչափ ալ վսեմութեամբ և ճարտարութեամբ տողուած է :

Այս գլուխս ընտիր նախերգանք մը կրնայ սեպուիլ ալ աւելի շքեղահիւս, քաջայօրէն և հանրագուտ գրելոյ մը՝ որ է ,

Հայկայ ջընը .

Հոս Հայագիր տարեգլուխը մեկնելով և լուսաբանելով գրեթէ հայրենեաց յաւիտենական աւերակաց մէջէն հին և պանծալի յիշատակ մը կրկին վերբերած և ցուցած է Հ. Վեւոնդ՝ իւր և համօրէն մարդկային ազգին, որով քաջալեր և նախատիպ եղած է Ռուսինեան ճարտարահար Դիմախան Տօմարին հրատարակութեանը :

Վաղղիական մեծ յեղափոխութեան յայսմ մասին վիժած արդիւնքը, Լեւոպական հին բռնապետական դրութեան անդրադարձ ճնշանը տակ ձգմուտեցան, թաղուեցան, կորան :

Իցէ՛ թէ այս բնական տօմարին արեւելքէն վերածնութիւնը, որ բարեբաղդօրէն տշխարհիս աւելի անդորր և խելաբերած ժամանակին դիպած է, և քան զամենեւին առաւել հնազանդ սովորութեան մը հեղինակութիւնն ունի, Վաղղիականէն աւելի բեղմնաւոր և ընդունելի ըլլար լուսաւորեալ աշխարհին :

Ս. Սահակ Պարլե- և Ս. Ոսկեբերան .

Եկեղեցւոյ այս երկու սրբազան Հարց գերմարդկային վարուցն ու բարուց վրայ ճարտարաբան հեղինակին գրիչը լոկ պատմութեան ասպարէզը թողնով՝ երկու անդուգական ներբողեաններ տողած է, արդարեւ արժանի այնպիսի լրանց : Սանաւանդ Ս. Ոսկեբերանի պատրման յիշատա-

կին առթիւ, Հայաստանի հարաւարին կողմանց, տեղեաց և սովորութեանց վրայօք տրուած ծանօթութիւնները համազգային արժանիք ունին, ըստ որում շատ օտար պատմութիւններու մէջ հարեւանցի և անստոյգ կերպիւ յիշատակուած են այդ տեղիքը :

Նոյնը և առաւել եւս կրնայ ըսուիլ նաեւ Նահանջ Իւր-ն Բախոփոնի գլխոյն մէջ նշանակուած տեղագրական մանրամասն և ճշգրտագոյն մասանց վրայ, որ թէպէտ Յոյն մատենագրին մէջ ալ արձանագրուած կան, բայց այնպէս այլանդակ անուններով, որ առաւել Սկիւթացւոց վայրենի երկիրներուն կրնայ զանոնք պատկանել Հայ մը՝ քան իւր բնիկ հայրենեացն և աշխարհին :

Ազգային վիպասանութիւն .

Հայոց մատենագրութեան սկզբբանն ու ծաղիկելուն համառօտակի մէկ տեսութիւնը կը պարունակէ՝ հանգերձ ընդհանր տեղեկութեամբ այլ և այլ ազգաց մէջ բանաստեղծական ոգւոյն և գրութեանց ծագմանը վրայով :

Ստորի և այս գլուխս — ըստ ինքեան առանձին հակիրճ դասագիրք մ'ալ կրնայ ընծայել մատենագրութեան այս ճիւղին համար, և ամեն բանասիրի ուշադիր վերծանութեանն արժանի է :

Նեպոլէ 'ի Հայս .

Նհա ցեղագրական ընտիր գլուխ մը՝ որ բարբարիկ ազգաց ծագման և յառաջատման վրայօք մինչեւ ցարգթէ յարեւելս և թէ՛ յարեւմուտս տեղի ունեցած խուզարկութեանց և հետազօտութեանց արդիւնքն ու արգասիքը կտրուկ մեթոտով, ընտիր ու ճով և բնական դասակարգութեամբ 'ի մի վայր բովանդակած է :

Սոյն գլխոյս մէջն ալ բաղմարդիւն
Եւ իշանեանը իւր առատ հմուտ թիւ-
նը ցոյց տուած է :

Հոռւան — Սարգիսի :

Նահապետին սրտածմելի գրիչը
այս գրութեան մէջ ալ քաջանկար
պատկեր մը յօրինած է Հայ նահա-
տակի մը կենսագրութեան առ թիւ ,
որ վարստանական գոյն կ'առնու թէ'
նիւթովը , և թէ' զարդարուն ոճովը :

Այս կարգէս են նաև թիւորդի Սա-
հոռւան, Սարգիսի և Նեարեայ, ու Յիւ-
սիսի նահատակագրութիւնները ,
ուր հանդերձ եռանդնալատ հաւա-
տօք մեծ իմաստ Յուշագրին, կրփայլի
հայրենասիրական խանդ և աւելն հը-
նախօսիկ Նահապետին :

Երբ Ա :

Փոքրիկ պատմական յիշատակա-
րան մը կը կազմէ այս գլուխս ալ, Եւ-
շտոյ կենսագրութեամբ և ժամանա-
կակից գէպերու նկարագրութեամբ,
որոց մէջ ուշագրութեան արժանի
են Սմբատայ արկածքը, թագադրու-
թեան և թագաւորին օժման հանդէ-
սը, Սեւ-Բուղայի և այլոց վրայ տըր-
ուած տեղեկութիւնները, որոնց յի-
շատակութիւնը արդարև խիստ տնձ-
կանօք կսկիծ և ցու կը բերէ Հա-
պուհ պատմչին կորստեանը համար,
եթէ իրօք այս կորուստը ապագային
մէջն ալ անդառնալի ըլլայ :

Երբ Երբ :

Սոյն Հայ կուլթեմպերկին անմու-
ռանալի ջանից և արդեանց գրուա-
տիքը՝ աղաքէն արժանի էր Յուշա-
գրին ոսկէտող գրչին, որով մեր շա-
տերուն համար անձանօթ մնացած
բաղմերախտ անձի մը յիշատակը վե-
րստին նորոգեցաւ : Հայ սրտերու մէջ,
և որուն ինչպէս ինքն իսկ Հ. Սե-
ւոնդ խիստ պատշաճ կերպով ըսած
է, « Ս'եր բաղմացեալ արդի տպագ-

րողաց և տպագրողեաց պարտքն է
հաշակել այսուհետեւ ամ յամէ ի-
րենց առաջնորդին սիրալի անունն
և գեղեցիկ յիշատակը : »

Օտայի և Սիւի :

Իւր բնեանց թագաւորութեան-
որ մեր ազգ. իշխանութեան արեւ-
մուտքն է — այս երկու ծիրանածին
տիկնաց նկատմամբ Յուշագրին գը-
տած և հրատարակած տեղեկութիւն-
ները որչափ ալ հետաքրքրական եւ
սրտաշարժ են, սակայն լատինախառն
երանգով պատած ըլլալուն համար՝
գողցես օտարտի պատմութեան մը
մէկէջն ընթերցումը կը թուի, մանա-
ւանդ որ անուններն ալ 'ի Փրանկ և
'ի Յոյն փոխուած ըլլալովն, Հայու-
թեան այս արտօքին նշանն անգամ
չտեսնուիր անոնց վրայ :

Պ. Եւթեման՝ ազգ. մատենագ-
րութեան նուիրած Եւթիմի և Երսաստ-
ի և Սահագն անուանեալ երկու ընտիր
քերթողական երկասիրութիւններովն
պատուաւոր տեղ մը կը բռնէ Հայ
քերթողաց դասին մէջ :

Առաջնոյն մէջ կան լի զգացմամբ
և հայրենասիրական ազգամամբ տող-
ուած տաղեր, բնական, պարզ և ճը-
կուն ոճով երգուած մեղեդիներ :

Եսի կը յայտնէ թէ, Պ. Եւթեման
պատկերի ճշդութեան և լեզուի կու-
րովութեան, սիրահար գտնուելովն
հանդերձ, հետամուտ եղած է նաև
նիւթի վտեմութեան, իմաստի ընտ-
րութեան և մտոյց ճախութեան :

Եսնց կարգէն է Սայիսի երգը՝ ո-
րոյ մանաւանդ այս ութերորդ տունը,

« Կիւր ինչուն ու ախանց վրայ

Ձեզն պտուռն են Հայոց ազգիկներ :

Բայց ցաւով տեսնում թէ մէկիկ չեղայ :

Թեփոց մէջ փախին թողով դափուներն : »

Հատ բանաստեղծական և գողոր միտք
մը կը սրբունակէ :

Ի վաղաժամին վերնագրով եօթն տուն երգն ալ օրոտուռ և ճարտար ոճով գրուած է :

Սահմանադրութեան վրայ յօրինուած մէկ ոստնաւորին մէջ գեղեցիկ գիւտ կը տեսնուի :

Սերոշի ուղղուած տաղիկն ալ իւր քողար հիւտն ունի և յանգերու գեղայարմար ներդաշնակութիւն :

Սակ պարանկին շատ թարմ և նրբ բին կերպով յօրինած է :

Վայց վերայիշեալ յայտք և լրբաւոր անուանեալ տաղերուն մէջ յահմանի ուղղուած մէկ փոքր քերթուածիկը թէ՛ ոճով և թէ՛ իմաստով քան զայլ ամենը վերագասելի կրնամք համարել, և վեմուծեան օրինակ :

Վախճանք, Վահագնք, Ներշնչութիւն, Վախճանք, Վարդ Նայայ, Պարն և մանաւանդ Պարերաւին Նպար լինին այնպիսի գրութիւններ են, որ ամեն ազգի համագաս քերթողաց և բանահիւսից պատիւ և յարգ կրնան բերել, և մեզ յոյս կուտան որ ժամանակին օգնութեամբ և անդուլ ջանիւք՝ Պ. Մ. Դէմեանի փափկաստ Սուսայն ալ դարուս բարձրութիւն Սուսաներուն կարգը պիտի կարենայ անցնիլ :

Իսկ Սահագն երկարածիք քերթուածը՝ Պ. Մ. Դէմեանի տողեալ գործոց — գլուխը կրնայ սեպուիլ :

Նիւթը՝ մեծաւ մասամբ տեղեւծական վրաստանութիւն մ'է, ինչպէս որ բուն գիւցազինն էութիւնն ալ պատմական ճշգրիտ սահմանի մը տակ չէ. — կէս Նայ, կէս Սար և գրեթէ Ներսիկի Նիւն կիսաստուածոյ արեւելեայ անձնաւորութիւնն ալ կրնայ համարուիլ :

Վալով գործոյն յօրինմանն ու լեզուին, կրնամք ըսել թէ՛ նորատիպ բանաստեղծական գրութիւններէն խիստ քիչերը կրնան մրցիլ այս հան-

գամանաց նկատմամբ, մեր երկտասարդ բանաստեղծին յառաջիկայ շարագրութեանը հետ :

Նարտար բանակարգութիւն, յոտակ և ոլորի ոճ, ընտիր յանգաւորութիւն և շատ տեղ վեմ իմաստներ և աղգային հեթանոսական ծիօնից և սովորութեանց նկարագրութիւններ, ասոնց բոլորն ալ կը պարունակէ Սահագն քերթողութիւնը, և ըզձալ կուտայ բանասիրին՝ որ այսքան և այսպիսի առաւելութեանց ձեռնհաս գրիչ մը աւելի հանրածա նօթ ազգային վէպ մը ուղած չէ ընտրել իւր աշխոյժ Սուսային սաւառնմանը նիւթ :

Վայց և այնպէս՝ ներկայ քերթուածոյս նիւթոյն ամուլութիւնը՝ նորահրատ քերթողին երեւակայութեան չսփը տուած է մեզ զանազան գիւտեր և տեսիլներ ի մէջ բերելով, որոնց շատը իսկատիպ են և յաջողակ հնարքով շարայարուած :

Նիւհանուր տեսութեամբ, գործոյն վրայ գովեստէն ուրիշ բան չի կրնար ըսուիլ :

Վայց ի մասնաւորն, կան տեղ տեղ խտրական և Վաղղիական ճաշակաւ և կամ անոնց հետեւմամբ յօրինուած սրտայոյզ կտորներ, որ Նայական ու ճոյն քաղցրութեան և գեղեցիկութեան շնորհիւ առաւել եւս փայլու համեղութիւն մը ստացած կ'երեւին :

Ս. Ե. Կան տողեր սոյն քերթուածոյս մէջ՝ որ երկար գրուագներ կ'արժեն :

Ս. Ե. Զգար սա յետագայ երկու տողիս մէջ հեղինակին արտաբերած հառաչանաց աղէկէզ իմաստը :

« Հէք հայրենիք, ծընար գիւցազն հազարօր, Ս. Ե. Զիւցազուք հազար ըզբեղ ու ծընան : »

Վարձեալ Յուլի գրուագին մէջ

նկարագրուած Միտհտայ զոհին հան-
գէտը, ըստ որում, մեր հեթանոս
նախահայրց հինօրեայ արարքներէն յի-
շատակ մը, քաղցր և տիրապին ըզ-
գացմունք մը կ'աղղէ ընթերցողին, ու
բոյ այսօրուսն օրս երեւակայութեան
օգնութեանն է միայն միայցիւր այսպի-
սի նախնական ծիսից վրայ գաղափար
մը կազմելու:

Միտհտայի երգեցիկ կուսանաց
նուագը՝ շատ մեծաւայելաւ է, և
Նօթա անուն իդալական օրէրային մէջ
այլ առ լուսինն ուղղեալ մէկ աղօթքի
մը տիպը կը բերէ:

Սիլիպի գրուագին սկիզբը՝ կարի
վսեմ պատկեր մը կայ գիշերոյ առ ու
արս Ստեփան:

Սիլիպի, աւելի կորովի ոճով գրու-
ած է, և պատերազմական նկար-
ները ուրեք ուրեք շատ ընտիր են,
մանաւանդ Սարի և Փրատտայ մե-
նամարտութիւնը որ կըսկսի

«Չանտառային շարժեալ ըզոյն» ձեպեալ գայո
տողէն՝ և կը վերջանայ

«Արեւնային սիրտք ընդ մահուդ յիշատակ»
տողով:

Կան նաև գողոր, բանաստեղծա-
կան և անբռնադէցիկ նմանութիւն-
ներ, որ շատ գեղեցիկ կերպով ալ
բացատրուած են, ինչպէս այս.

«Իբր աչք ծաւի ընդ կամարք յունից թաւ»
Ժպտեք ծաւակն ընդ եզգանց հովանեալ:

Սիլիպի, Սահագնի ծնունդը,
որ քերթուածոյն աւարտման մօտ
պատմուած է, մեր Վոլքիցայի նախ-
նեայ երգոյն նմանողաբար, արդարեւ
կատարեալ տաղաչափութեան տիրար
մը կրնայ ընծայել Հայ գրասիրաց:

Կան երգահաններ, որք իրենց քը-
նարին առաջնորդ՝ ճոխաբան լեզուէ
աւելի, իմաստի առատութիւն եւ
տրամաբանական ճշդութիւն կ'ընտ-

րեն, և բանաստեղծութիւնը գող-
ցես իւր մերկ գեղեցիկութեամբը
կ'ուզեն փայլեցնեն:

Միտհ գառն է Պ. Հիտարեանի
Վիտան անուամբ հրատարակած տա-
ղարանը:

Սիլիպի գողոր իրենց տեսա-
կին մէջ մասնաւոր գանաղանութիւն
մը ունին, և կը չափուին միշտ իրենց
իրական արժանեօրը:

Վիտանի լեզուն ընդ հանրապէս գը-
րտառով խառն աշխարհաբառ է, որ
շատ տեղ ընտիր ոճ մը կը ձեւացնէ
բառերու անշուայլ դասակարգութեւ
և նիւթոց պարզ ու անսեթեւեթ
բացատրութեամբ:

Այլ լուսնոյ վերնագիրը կըսղ տա-
նաւորին նիւթը՝ եղական երեւակա-
յութիւն և բանադատական յարմա-
րութիւն կ'ենթադրէ:

Նոյնը կարելի է ըսել նաև Տո-
վանդի վիպախառն գրութեան հա-
մար՝ որ խրատական և աղղու է, և
որ ա՛յնօրձ համբակի մը գրէն շէր
կրնար ՚ի դուքս գալ:

Սահագնի ու Սիլիպիի արեւե-
լեան ճաշակաւ տողուած են և ընտիր
ոտանաւորներ կը պարունակեն:

Սիլիպիցայի ետքի կողորդ — որ
խորենացւոյն կ'ակնարկէ — խիստ սը-
տառու է:

Սիլիպի իսկը բուն Պարսիկ ոճով
գրուած է, և խրատական բանաս-
տեղծութեան գեղեցիկ օրինակ մ'է:

Ի հանկի գիտահաս, ի յիշ, ի բա-
ղանեաց, ի բանահի և մանաւանդ ի հա-
կի՞ն հարուստ երգը՝ որոյ վեր-
ջին մասը Վոլքիցայի ողջոյն մ'է, լի
են գեղեցիկ ստեղծումներով, ու մերթ
գողոր և մերթ վսեմ տողերով:

Հետեւողութեան բազմակոխ շա-
ւիղը չախորժող և լոկ բառից ու քե-
րականական խորթութեանց խճողմա-

նէն խորշող բանաստեղծներուն երկա-
սիրութիւնները որչափ սուղ ըլլան,
այնքան թանկագին են և սիրով ըն-
թեռնել:

Չեմք գիտեր՝ տաճար համար է, թէ
հայկական անպաճայճ և համեղ ոճոյն
աղագու, որ Վիսնը անտաղտուկ մը
տօք ծայրէ ի ծայր կը կարգացուի:

1847 ին՝ Կոնկաթայի Մ. Երարա-
տեան տպարանէն առաջին անգամ
երեւան եկած, և անցեալ տարւոյն
մէջ՝ բանասիրաց ոմանց ջանիւքն՝ ի
Պօլիա երկրորդ տպագրութեան ար-
ժանացած բանաստեղծական վէպ մը
— և կամ ինչպէս հեղինակը կ'անուա-
նէ — Քեօ մ' է Սոս և Սնդիպի:

Նիւթը՝ արեւելեան մատենագ-
րութեան մէկ սիրուն մանրանկարն է,
որուն մէջ աւելի երեւակայութիւնը
կը տիրէ՝ քան թէ ճաշակը:

Աւր նաև խրատական ասացուած-
ները՝ շատ մը մտացածին պատկերներ
բու հետ միահամեմատ խմբուած են:

Ս. Թաղիգեանցի այս գործը՝
Պարսիկ և Հնդկի բանահիւսններու
մէկ նմանութիւնը կրնայ սեպուիլ:

Հնգտոնայ ոտանաւորը անգտեղ
շատ պարզ և յաջողակ կերպով յօ-
րինուած է. և երբ հեղինակը, Վան
գիտի եղբորաց վրայ թափառելու ա-
տեն, հայրենեաց քաղցր անունը կը
շիշէ, գրիչը մէկէն ի մէկ ուրիշ ըն-
թացք մը կ'առնու և, հինգերորդ
երգին պէս, ոճն ալ, ճաշակն ալ մի-
անգամայն աւելի կկրթ և կորովի ձև
մը կը դրենուն:

Թաղիգեանցի սոյն աշխատասի-
րութեան փառքը հոս չյանդիր:

Մտք մէջ՝ Թաղիգեանց, Պրահ-
մանական դիւցաբանութեան վրայ
մինչեւ ցարդ հրատարակուած աւ-

ղեկութիւններէն աւելի կատարեալ
ծանօթութիւններ տուած է. և միայն
այս հանգամանքն ալ կրնար իւր գոր-
ծոյն արժանեաց կշիռը տալ, եթէ
ուրիշ լեզուագիտական և սրբամական
հմտութեանը չափն ալ տուած չըլլար
սոյն փոքրիկ հեղինակութեանը ծա-
նօթութիւններուն մէջ:

Հնդկի, Պարսիկ և Նիգդիական
լեզուները հաւասարապէս ծանօթ են
իրեն, նայուէս և անոնց հեղինակնե-
րէն շատերը:

Իսկ գալով բառերու ոմանց ստու-
գութանութեան վրայ յայտնած կար-
ծեացը մասին, հայրենասէր հեղինա-
կին ազգային զգայմունքը տեղ տեղ
զինքը չափազանցութեան տարած կ'ե-
րեւին, մանաւանդ երբ կը ջանայ օ-
տար լեզուաց — և առաւել քան զա-
մենը — Սանսքրիթի բառերէն մէկ քա-
նին Հայերէնէն ծագած համարիլ,
մինչդեռ ընդհանուր լեզուագիտաց
խուզարկութիւնները ասոր հակառա-
կը հաստատած են:

() րինակի համար. Կոնկաթայի Յու-
նական անուան գալով՝ մեր լեզուին
մայրութիւնը և Յունաց գողութիւնը
հաստատել կը ջանայ, և չուզեր տես-
նել որ երկուքին ալ նախամայրն է
Սանսքրիթը:

Իսկ Վանգէս կամ Վանգա գետոյն
անուանն ալ Հայերէն արմատ մը տալ
ուղիքը, սոսկ ազգասիրական յանգ-
նութենէ մը յառաջ կրնայ գալ:

Մյուս ամենայնիւ՝ Հայաստանի
իրաց և տեղեաց վրայօք Թաղիգեան-
ցի տուած տեղեկութիւնները շատ
յաջող և նուրբ մոքի մը երկնած ար-
դասիքն են:

Ինդ ամենը՝ մեր Հնդկաբնակ Հա-
յոց այս չքնաղ ծնունդը, որ և նորագ-
տպագրութեան մ' ալ արդարապէս
արժանացած է, դարուս Հայ մատե-

նագրութեան ոսկեղինիկ շղթային մէկ
գեղեցիկ օղակը կը կաղմէ և թաղե-
դեանցի անսունը, աղգիս հանրաձա-
նօթ բանասիրաներուն անուանոց կար-
գը կը դասէ :

Եւ ինչ հնաւանդ յիշատակարաննե-
րը որք Վանայ սեպուխտէն — արձանագրէրը կը
կոչուին, և որք գողցեն Սեփին Հա-
յաստանի մէջ այլ օգինակ Սիւնի մը
նման բարձրացող հիւսկառաց, բա-
րակոփ միջնաբերդի մը անովերձանեկի
առեղծ ածները կը ներկայացնեն յի-
տագայ սերնդոց, այս անգամ — ինչ-
պէս նաև. տարիներով յառաջ — բա-
նասէր հասարակութեան ուշադրու-
թիւնը վերստին զարթուցին, նա մա-
նաւանդ Հայոց հետաքրքրութեանը
նիւթ և ճարակ հայթայթեցին, Սօթ-
ման անունն բաղմահմաւ արեւելա-
գէտ Վերմանացւոյն հրապարակաբո-
սութիւններովը :

Ս. Խորենացին — որ մեր Հերոս
գոռը կրնայ կոչուիլ — Հայկազանց իշ-
խանութեան միջին և վերջին մասերը
այնչափ մութ թաղած է — թէպէտ ոչ
կամովին — որ մեր բուն Վրացին
պատմութեան այս արտայայտ միջոցին
վրայ փոքր ինչ լըս մ'անգամ ունե-
նալը՝ հիմայ ամեն հայրենասէր Հայու
բաղձանաց կէտը կը կաղմէ :

Նախ՝ յայտնի չէ թէ մեր բաղ-
մարդիւն եւ ոսկեգրիչ պատմահօրը
յիշատակած քսան և եօթնի չափ իշ-
խանաց կամ թագաւորաց տէրու-
թեան սահմանները որոնք էին, և թէ
ինքնագլուխ էին թէ հարկատու :

Դարձեալ, թէ ուր կը վերջանար
Հայոց սահմանը և ուրիկց կըսկէր
մէկ կողմէն Սարացը, միւս կողմէն
Պանոսացոցը, Վրացը և Սկիւթաց,
և ի Հարաւայ Մարեաստանեայցը :

Եւ և ասոր նման տեղեկութիւն
ներուն չգոյութիւնը խիստ խառնա-
շիւթ կերպարանք մը կուտան, մա-
նաւանդ Վրեւելեան Հայաստանի
բնիկ որ իշխանութեան տակն եղած
ըլլալուն ինքրոյն, որ հետզհետէ Հա-
յոց, Սարաց և Մարեաստանեայց ար-
շաւանայն ու տիրապետութեան են-
թակայ եղած է, և երեք — և թերեւս
առաւել — աղգերու պատմութեանը
թաղի ու թաղը հանդիսացած :

Սոյն թէութեանց աւելի հաստա-
տութիւն կուտան յիշեալ Տ. Սօթ-
մանի բրոնզաւորակ հետազոտու-
թիւնները, Վանայ բեւեռաձև ար-
ձանագրութեանց նկատմամբ, որոց
համար — եթէ ստուգիւ ինքը ասոնց
վերձանութեան բանալին գտած է —
կարծեմք խիստ յանգուսն առարկու-
թիւն մը բրոնզէնք ըլլար ըսելով թէ՝
փոխանակ Հայ թագաւորաց մէկ ցան-
կը գտած ըլլալու, բոլորովին ուրիշ
աղգի տիրապետներու շարք մը ձեռք
ձգած է նա՝ որք այն աստեղները իրենց
նուաճած Վասպուրական գաւառին
Տոպ քաղաքին հետ ալ մեծ յարա-
բերութիւն ունին եղեր՝ իրեւ մա-
րութազոյք մը :

Եւ նախ՝ դիտելու կէտ մը կոչ Տ.
Սօթմանի մեկնած արձանագրու-
թեանց մէջ՝ որ բնաւ ուրեք աղգի ա-
նուն չկոչ, այլ տէրութեան երկրին,
որ է՝ ընդհանուր անուամբ կոչուած՝
Պիւսմա :

Եւրդ, յայտնի է որ այս անունը
Հայ լեզուի բառ չէ, և ոչ իսկ մեր
արմատական միավանկներէն բար-
դեալ բան մը, կամ գոնէ ազաւա-
ղեալ բարդութիւն մը :

Մար իմաստը՝ եթէ Հնդկաց եւ
կամ Մարեաստանցոց լեզուէն չելեր,
հարկ կ'ըլլայ հնագիտաց՝ նախնի Սա-
րաց լեզուին մէջ բնութեւ, որմէ ծա-

գած է և հին Պորտիերէնը և Պակասին կամ Պարթեւը :

Վալով թագաւորաց անուանե-
րուն :

Լսոնց մէջ ալ բաց ՚ի Պակասին — որ ըստ մեզ Պարթիւն , և ըստ Պար-
սից կամ Սարայ՝ Պակաս (այսինքն
քաջ, արի) անուան կը համաձայնի —
միւս բոլոր անուաները և ոչ մէկ ազ-
գի միջինակ կը պատկանին : Քանզի
Հայերէն ըլլալ չեն երեւիր , թէ և
ընթերցման ոճն անգամ փոփ խել
պէտք ըլլայ :

Իսպանիկն՝ Լպակոնի ընկերակիւ՝
դարձեալ հայոցուցած չենք ըլլար ,
որովհետեւ աննշան տոհմական կու-
շում մը տուած կ'ըլլանք այս հինգ
համասերունդ կարծուած իշխաննե-
րէն միայն որ անտեղի է , քանզի միւս
չորսին ալ սեպհականապէս տրուել
հարկ կ'ըլլար :

Սինուալը , Փառնաալ կամ Սանա-
ալ յորջորջել պէտք կ'ըլլայ , և ասով
միայն Խորենացւոյն յիշած Փառնա-
ւասին կը մօտենայ , (թէպէտ և Փա-
անունը այն բեւեռագիրոց մէջ ար-
դէն յիշուած ըլլալով՝ այս տեղ ար-
ձանագրիչը Փառը Սինի փոխելու կա-
րօտութիւն չունէր) :

Լիւիսիւր մեր տառաջընթեան
ամեն կանոններէն կ'ընդգլխի և ո՛ր և է
հնարիւք չուզէր հայանալ : Լսոր հա-
մար ալ Խորենացին՝ իւր յիշած ժա-
մանակակից Սար թագաւորներէն՝
Լիւիսիւս անուն մէկը շատ նմանաձայն
և յարմար եղանակաւ մէջ կը բերէ ,
կարծես այս դժուարակնձիւն խնդի-
րը՝ շատ մը դարերէ յետոյ լուծելու
մտք :

Դարձեալ , Խորենացին մեզ կ'ա-
ւանդէ — հարազատ աղբիւրէ քաղե-
լով — ինչպէս նաեւ պատմական ճշշ-
դութեան մասին մինչեւ ցարդ ան-

հերքելի հանդիսացող Լսորաւածու-
չունչ գիրքն ալ կը հաստատուէ՝ թէ Լ-
սորեստանաց կործանմանը գործոյն
մէջ՝ Հայք և Սարք զինակցաբար
վալուեցան . (Լսորատեան և Լս-
քանազեան ըսելով , որոց մէկը կամ
միւսը անշուշտ Սարաց կը պատկանի) :

Լրդ , մեր բեւեռագիր տրձանա-
գրութեանց մէջ այս զինակցութիւնը
երբէք յիշուած չերեւիր , մանաւանդ
թէ միշտ մերձաբնակ իշխաններու և
չըջակաց ապստամբ գաւառներու հետ
կոխ և ոտով կ'աւանդէ , որով և
եկամուտ կամ օտարազգի բռնացող
տէրութեան մը գաղութարար կուտայ :

Սէկ անդ մ'ալ Խորթիլ բառը
երեւան կուգայ , զոր ներհուն վեր-
ձանողը շատ պատշաճօրէն խօփիլ կամ
խրփիլ բառով կը մեկնաբանէ , որուն
արմատն է՝ խօփ (ինքն) և փ — (տէր)
այն է՝ ինչնալ , Դապիս , և ըստ այնմ՝
Սարերէն կամ որ նոյն է՝ Պարսկերէն
բառ է :

Լսս ստուգաբանութիւնը նմա-
նապէս խորթիլ տեղական անուան
ալ կրնայ յարմարիլ՝ որ ըսել կ'ըլլայ
ինչնալ — ինչն կամ իրիլ փեր — ինչն :

Իսկ Վալով Պորթիւս բառին՝ զոր
նոյնպէս տեղական անուանակոչու-
թիւն մը կը կարծէ լինիլ , և որուն
մեր Հայոց Պոյս գաւառը նշանակել
կը համարի , կարելի չէ՞ արդեօք այս
բառն ալ Լալարիայի համաձայնեցնել
և Լակորիացոց աշխարհը իմանալ :

Տ. Սորթմանի մէկ խօսքն ալ կրը-
նայ այս բեւեռագիրներուն Սարաց
պատկանիլը հաստատել , որ է՝ տէրու
թեան աշխարհին նախ , Սարի կոչուի-
լը « Որ , կ'ըսէ , ճիշդ Հայոց Սար բա-
ռը կը յիշեցնէ մեզ » :

Ըսկէց կ'երեւի թէ՝ Վարդակիս
Սարայ իշխանին յաջորդացը և կամ
անոր նախորդացը ցանկին մէկ մասը

գտնուած բլրայ սոյն յիշատակարա-
նացս մէջ, որոնք առ ժամանակ մի
Հայաստանի ալ տիրած բլրն է: Բան
զի ուրիշ կերպով չեն կրնար մեկնուիլ
այսքան այլատարազ անուաններ և դից
շարակարգութիւն մը՝ որ Հոյու մը
համար անմեկնելի սուեղծուած մ' է:

Եւսկիւր՝ ընդհանուր արեւելեայց
պաշտածն է՝ և ոչ մէկուն սեպհա-
կան: Եւսկիւր բառը մինչեւ ցարդ՝
Պարսիկ բարբառով գործածելի է:

Եւսկիւր — յետ Հնդկաց — յայտնի
Պարաց կամ Պարսկաց բառ է, և ու-
նի իւր բարդութիւնները, որք են
Եւսկիւր (Եւսկիւր հոյու միւս անունը)
Վ. Եւսկիւր, Եւսկիւր, և այլն:

Փառ՝ որչափ Հայերէն է՝ նոյն-
չափ ալ Պարսկերէն կամ Պարերէն է,
Ֆառ կամ Ֆէր յորջորջմամբ և միւս
նոյն նշանակութեամբ, և ասոր մէկ
հին բարդութիւնը՝ որ է, Ֆէր-Ֆէր
կամ Կորդիկ հնչմամբ Կորդիկ փա-
ռացի և փառասոր իմաստն ունի, և բո-
մեր պատմահօր դասակարգութեան՝
Վարբակիս Պարաց թագաւորին
հինգերորդ յաջորդն է:

Վարդի գոնդիկ բառ կ'երեւի, և
կը կարգէ Պարասկարդի անունը՝ որ Հին
գիկ մեծ գիւղուհեաց մին է:

Խո-Բիւն ալ ինչպէս Տ. Սորթման
կ'ըսէ, իօթ բառն է Պարսկաց, որ ը-
սել է ինքնի, այսինքն ինքնագոյ, անեղ,
և այլն:

Օխիթա անունը կը յիշեցնէ
գարձեալ Պարսկաց լիպ և Ֆէր կամ
լիպ-Ֆէր բառերը՝ որ կը նշանակեն
գիւր և լիպ:

Սնացածներն ալ Եւսկիւր և Սա-
րաց լեզուէն ըլլալուն հաւանակա-
նութիւն կը տեսնուի:

Եւսկիւր ամենայնիւ, այս բեւե-
ռագիրներուն — բաց ի անուններէն —
միւս հանգամանքները կրնան նաեւ

Խորենացւոյն մէջ չիշուած Հայկազն
թագաւորաց մէկ ցեղին պատկանիլ,
և ասոր հակառակը պնդելու համար
առ այժմ ձեռքերնիս ուրիշ աւելի
զօրաւոր փաստեր չունինք:

Եւսկիւր գարձեալ քննել թէ Տ.
Սորթմանի ժամանակագրութիւնը
ո՞չափ ստույգ ապացոյցներու վրայ
հաստատուած է:

Եւսկիւր Եւսկիւրացի հետ պա-
կարազմի յիշատակութիւնը պա-
ճառ եղած է այս բեւեռագիրները
Բրիտոսէ 6-7 հարիւր տարի առաջ
ուսն պատմութիւն մը ենթադրելու,
այս բաւական չկրնար ըլլալ, որովհե-
տեւ՝ ըստ մեր պատմահօր, Եւսկիւր
ալ Եւսկիւրացի արշաւած էր (1):

Սար — Եւսկիւր և անկէջ առնելով՝
Սարսէս Խորենացին յայտնի կ'ըսեն
թէ այս սեպագիր տախտակները Շա-
միրամայ ժամանակ արձանագրուած
էին:

Եւսկիւր անունը ալ տեղի կու-
տայ ենթադրելու թէ Եւսկիւր աղ-
դակից և կամ օտարազգի յաջորդացը
ոմանց պատմութիւնն ըլլայ: Բանդի
Եւսկիւր առաջադիւստուն մահն ու Ե-
ւսկիւրացի երկար առնել գերու-
թեամբ՝ Անուանաց կամ Օւմեհայ
մօտ, արքունի դուռը սուրբարին և
ապա ապստամբելով փոխելին ու ա-
ռանց խոչընդոտի Հայաստանի մէկ
մասն և վերջապէս բոլորն ալ գրաւելը
և անբնական կերպիւ հանդարտ թու-
ղուիլը որ յորդուց յորդի տիրապե-
տէ, ասոնք այնչափ անորոշ թողած
են Հայոց պատմութեան այս միջոցը՝
որ կրնան հաւանականութիւն մ' ալ
երեւցնել թէ, վերոյիշեալ բեւեռա-

(1) Իսկ զմեծ մասն դաշտացն Եւսկիւրացի կա-
լա ի ծառայութեան հարկի Եւսկիւր բազում ժա-
մանակս:

գիրները — յետ Համիրայ — Մարես, տանցի կեղմնակալ իշխաններէն ոմանց գործքերուն յիշատակարանն բլան, (յորոց և մին՝ Նինուասայ համանուն կամ համազգի Սինուազն բլալ կը թուի), և որոնք՝ Սարաց և Հայոց անկախ իշխաններէն մէկ քանիներուն հետ սրտերազմներ տուած բլալէն զատ, նոյն ինքն իրենց հարկապահանջ Մարեստանցւոց տէրութեան դէմալ

կրբեմն ապստամբ և յարձակող գրա- նուած բլան :

{Իշխալ արձանագրութեանց լեզ-ւին գալով՝ հնագիտաց կարծիքը դեռ միտքան չեն, և գրեթէ ամենքն ալ կը հաստատեն թէ խոռն լեզու մը բլալ լու է, կամ աղաւաղեալ Մարերէն, (ոմանք ալ Նգիպտական բլալ կը հա-մարին և այն լեզուով իսկ կը յոջողին մեկնելու և լուսարանելու) (1) :

Ա-Ինթերքումն բեւեռագրաց .

Բ-Իսուական մեկնութիւն ՚ի Հայ .

Ա-Ստպաա բան ինա .

Բ-Սինուասայի քաղէ լինիլ Խարարանայ

Ա-Թիպ նասի իլու

Բ-Իսի իշխան Մարաս

Ա-Եւհիտ պիլթ իննա

Բ-Օղէղ զարձար յաւելալ

Ա-Թիքուլթի կունա

Բ-Իպալթն Ժողովրդեան

Ա-Իքան Սարու

Բ-Բանայայալթար արքայ

Ա-Բասիա Իսու ու

Բ-Գասեայ որ Խառոյց

Ա-Թուուսբաա ի իրու :

Բ-Ի Տոպ քաղաք :

Իւսրուն իմաստին մեկնութիւնն է հաւանականագէս այս :

« Հալտի Մտուած, (կամ Մտուածն Քաղդէացւոց) Եօթնպատիկ փառաւ որ արաոցէ զանձն Սինուասայ

(1) Ընթերցողաց հետաքրքրութիւնը յագեցնելու և մերժագէս յիշեալ բեւեռագիր արձանագրութեանց ընթերցման ոմայն վրայ հնաւոր հասարակութեան գաղափար մը հաղորդելու նպատակաւ, Գաղղիոյ տէրութեան Տրապիզոնի մէջ գրաւուող Տըթէօր ար Ռայէն անուն հիւպատոսին՝ Վարագայ վանքէն լուսանկարով ընդօրինակած (և անկից առաջ ալ Ըուլք անուն Ղերմանացի հնագիտին հրատարակութեանցը՝ Տախտակ Զ. Թիւ Է. արձանագրոյն մէջ պարունակուած) Եօթն-տողեան մէկ հատուածը հաւ հաւանդենք՝ ըստ Ռայէրդեան ընթերցման և մեկնութեան, (Տէն Լէ-Նոն Զէրալ, Թիւ 65, Հատոր Գ.) :

— Իլու Հալտի նինի

— Մարասի Հալտի Խառաար

Սինուասի Իսպուլինա

Սինուասայ Իպալթեայ

Հալտի ի Իստուուրի

Հալտի պաւպալթա

ստպու լու ու

է սելան

Սինուանա Իսպուլինա

Սինուասայ Իպալթեայ

տաննու սարմաթ

Հզոր արքայ աշխարհին

պիթ ալուսի

արուն սապուաթ-թիւն

(որդւայ) Իսպուլինայ, (որ է) իշխան բարի :

Հալտի Մտուած՝ (կամ Մտուած Քաղդէացւոց) պահպանեալ զտաճարն շքեղ (յոր) կայ սեղան երկրպագութեան (վան) Ժողովրդեան :

(Քանդակեցաւ արձանս ՚ի յիշատակ) Սինուասայ Իպալթեայ քա հանայապետի, (որ է) արքայ հզոր, արքայ աշխարհին Քասեայ, նա կառոյց տուն (կամ տաճար) աստուածոց ՚ի Տոպ քաղաք, (կամ՝ նա կանգնեաց տաճար Մտուածոյն, որ է պաշտպան քաղաքին Տոպայ, և կամ՝ նա արար զՏոպ քաղաք հոյակապ՝ որպէս բնտուն աստուածափայել) :

Սեր խորհրդածութիւնը :

Վիտելու բան մ'ալ սա է, որ մինչեւ ցարդ յիշեալ բեւեռագրաց ս'է գրութեամբ վերծանութեանը մէջ, մեր Հայերէն լեզուին խիստ շատ բառերը կ'ազնուի (Օ. Չ. Ճ. Չ տառերէն և ոչ մէկը կը գտնուի :

Ըրդեօք Տ. Սօրթմանը այս տառերը գտած է թէ ոչ :

Իայց այս թէութիւնները և կամ լեզուին բուն Հայերէն բնական նը կատմանքն ալ — որ դեռ յայտնի չէ — բաւական պատճառներ չեն կրնար սեպուիլ ապացուցանելու որ՝ պատմութեամբ եղիլութիւնները ի հարկէ Հայոց թագաւորներու գործեր են, քանի որ օտարազգի աշխարհակալ մը յաջորդներն եւս այս արձանները բնիկ տեղացի լեզուով կրնային քանդակել առեւտրայ, ինչպէս ետքերը՝ Վաղարշակ Արշակունին, և այլն :

Արեւմտ ինչ բնելու ենք սոս բեւեռագիրներուն համար :

Թէ՛ ասանց ուղիղ բանալին դեռ ձեռք անցած չէ՞ — ինչպէս կը պնդեն ոմանք ի բանասիրաց :

Իսկ եթէ գտնուած է, և մանաւանդ Հայերէն լեզուի ծանօթութիւնը նպաստած է ասոր, ինչպէս մեկնելու է այն ատեն (Քերդի և Սաւրանի երկմտութիւնները, չք. փոթութիւններն ու անյաջող վաստակները, մինչդեռ ասոնք ալ Տ. Սօրթմանի չափ օրատեսութեամբ կարող էին մոտաբերել թէ՛ Վանայ, (այսինքն ի վաղուց անտի Հայաստանի բնագաւառ սեպուած քաղաքներէն մէկուն) մէջ գտնուած բեւեռաձեւ արձանագրութիւն մը պորղաբանելու համար, նախ և առաջ Հայերէնին դիմելը բնական պէտք մ'է, և թէ՛ բոլոր այնմ խիստ դիւրին միջոց մը կար ասոր գաղտնիքը հասկնալու համար :

այն էր՝ տեղւոյն բնակիչներէն որուն որ հանգիպէին՝ հարցնել, թէ այս ինչ բառը ինչ կը նշանակէ Հայերէն լեզուաւ :

Եւ միթէ յիշեալ երկու՝ և անոնց մէջ դատ՝ Հինքս և Շուլը՝ հմուտ հնախոյնները, այս բնական միջոցիս չգիմեցին :

Ինչո՞ւ ուրեմն այս առեղծուածը մինչեւ ցարդ անըստ մնացեր էր :

Սեր այս հարեւանցի դիտողութիւնները Տ. Սօրթմանի 1871 տարւոյն մէջ՝ Աւագուրիկի լրագրութիւն միջոցաւ հրատարակել տուած լուսաբանութիւններուն ընթերցմունքէն ծնունդ առած են :

Աստի յայսմ մասին աւելի հաստատ կարծիք մը կազմելու համար, մեծատաղանդ հնագիտին վերոյիշեալ բեւեռաքանդակ արձանագրութեանց նկատմամբ՝ տարւոյս մէջ հրատարակելիք նոր տեղեկութեանց մնալով, մեր — թերեւս թիւր — ենթադրութեանց հոս վերջ կուտանք :

Ասուկանան՝ փափուկ խնդրոց մէջ աւելի տրամաբանութեամբ վարուելու է, քան թէ զգացումով :

Սեր ազգային պատմութիւնը, ինչպէս որ է առ այժմ, բաւական փառալից անցեալ մը ձգած է, որուն համեմատ սպառնալիք մը եթէ հաստատել յաջողինք, այն իսկ շատ է մեզ, առանց հարկ բրնելու անհաւաստի և թերեւս օտարոտի փառաց և պարծանոց միջամտութեան :

Ա. Յ. Այվազյան :